ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 օգոստոսի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

109
(2959)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՎԱՐԱԿԻ ԻՐԱՔԵԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՅԼԵՐ ՉԵՆ ԱՐՎՈՒՄ

Մոծակի խայթոցից մարդուն փոխանցվող West Nile (Արեւմտյան Նեղոսի տենդ) վիրուսի մասով մտահոգությունները շարունակվում են խորանալ, քանի որ 4 տասնյակից ավելի վարակվածներ կան արդեն Հայաստանում՝ եւ մեկ մահացության դեպք:

Թեեւ լուրեր կան, որ մահացածների թիվը ավելացել է, իսկ վարակվածներինը հասնում է մոտ 4 տասնյակի, սակայն պետական գերատեսչությունից պաշտոնապես այլ տվյալներ հաղորդեցին:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ առողջապահության նախարարություն՝ պարզելու, թե քանի մահվան դեպք է արդեն գրանցվել մոծակի խայթոցից փոխանցված վարակի հետեւանքով: «Ժողովուրդ»-ին հայտնեցին, որ մեկ մահվան դեպք է գրանցվել, հիվանդն ունեցել է ուղեկցող մի քանի քրոնիկական հիվանդություն: «Հայաստանում գրանցվել է Արեւմտյան Նեղոսի տենդով վարակվելու դեպք, որը փոխանցվել է մոծակի խայթոցի միջոցով», - հայտնում է առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնը: Վարակման հետեւանքով մեկ մարդ մահացել է, եւս 20-ը հոսպիտալացվել են: Կենտրոնը նշել է, որ վիրուսով վարակվածների 80%-ի շրջանում ախտանիշներ չեն զարգանում, սակայն 1%-ի դեպքում կարող են զարգանալ նյարդաբանական լուրջ բարդություններ՝ ինչպիսիք են էնցեֆալիտը կամ մենինգիտը:

Նկատենք՝ վարակի 1-ին կասկածելի դեպքը եւ մահվան դեպքը արձանագրվեցին դեռեւս օգոստոսի առաջին օրերին, սակայն այդ մասին առողջապահության նախարարությունը չի հայտնել: Հանրությունն այդ մասին իմացավ ընդամենը օրերս՝ լրատվամիջոցներում հրապարակված նյութերից, որում հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի տնօրենը հաստատել էր մահվան դեպքի մասին տեղեկությունը:

Նկատենք, որ այս օրերին հասարակության շրջանում առկա անհանգստությունները, վախերը, կասկածները փարատելու համար նախարարությունը ոչինչ չի արել. ընդամենը մեկ օր առաջ՝ օգոստոսի 19-ին, հրապարակվել է զգուշացում վիրուսի ախտանշանների եւ տարածվածության վերաբերյալ (մեջբերված է վերեւում): Այս խնդրով մամուլի ասուլիս ընդամենը երեկ է հրավիրվել, երբ, սկսած ամսվա սկզբից, պետք էր պարբերաբար հաղորդագրություններ, հարցազրույցներ, տարատեսակ հրապարակումներ լինեին՝ մարդկանց այս վարակի մասին իրազեկելու համար:

Սակայն առողջապահական քաղաքականությունը տապալած թիմը ոչ միայն դասեր չի քաղում հազարավոր մարդկանց կյանքեր խլած վարակիչ հիվանդություններին դիմակայելու իր տխուր փորձից, այլեւ նույն ամբարտավան ինքնավստահությամբ շարունակում է հանրային քաղաքականության իրականացումը՝ առանց այդ էլ սթրեսի, տագնապի մեջ ապրող հանրությանը նորանոր սթրեսների ենթարկելով, իրազեկման աշխատանքներ չկատարելով, անտեսելով վարակիչ հիվանդությունների համաճարակային հսկողությունը, չներգրավելով համապատասխան մասնագետներին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:



Արագածոտնի մարզպետն ինքն իր դեմ «հաղորդում» է տալիս. պետական աշխատանքին զուգահեռ նա բիզնեսով է զբաղվել: Չափազանց ազնի՞վ է Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանը, թե՞ ծայրաստիճան անփորձ ու ոչ պրոֆեսիոնալ՝ դժվար է ասել, բաց նա իր պաշտոնական կենսագրության մեջ գրել է, որ 2013-2017 թվականներին, լինելով պետական ծառայող, աշխատելով ազգային վիճակագրության ծառայությունում, միաժամանակ 2010-2018 թթ. զբաղվել է բիզնեսով: Ծայրաստիճան հակաօրինական արարք, որի պատճառով բազմաթիվ ընդդիմադիրներ այժմ հալածվում են գործող իշխանությունների կողմից: Կարձագանքի՞ այս՝ ապացույց որոնելու կարիք չունեցող ակնհայտ փաստին ՀՀ Հակակոռուպցիոն կամ կոռուպցիան կանխարգելելու կոչված որեւէ մարմին, թե՞ ոչ, դժվար է ասել, քանի որ կառույցներից մեկը ղեկավար չունի, մյուսը՝ քաղաքական ցուցում: «Ժողովուրդ» օրաթերթը ամեն դեպքում դիմեց ՀՀ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանին, ով մեզ հետ զրույցում բացատրեց. «Ես որեւէ անհամատեղելի աշխատանք չեմ կատարել: Ազգային վիճակագրական ծառայության աշխատանքը համատեղել եմ իմ բիզնեսի հետ եւ ոչ մի անօրինական բան չեմ արել: Ժամանակի առումով էլ չէի կարող ինչ-որ բան անել. մեզ մոտ, նկատի ունեմ՝ վիճակագրական կոմիտեում, մարդահամար է անցկացվում, ժամանակավոր պայմանագրային աշխատողների են վերցնում, յուրաքանչյուր գյուղում մի քանի հոգի պահանջվում է»: Ամենայն հավանականությամբ, Սերգեյ Մովսիսյանը պայմանագրային աշխատանք է իրականացրել պետական համակարգում՝ իր բիզնեսի հետ միաժամանակ, սակայն անգամ դա դժվարացավ բացատրել:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Արաբկիրի թաղապետարանի պաշտոնատար անձանց կաշառքի գործով անցնող, Pink berry-ի սեփականատեր Լեւոն Սաֆարյանը օգոստոսի 23-ին, ըստ ամենայնի, ազատ կարձակվի: Բանն այն է, որ այս պահի դրությամբ նախաքննական մարմինը որեւէ միջնորդություն չի ներկայացրել դատարան՝ նրա կալանքը երկարաձգելու վերաբերյալ: Ինչպես հայտնի է՝ կալանքի տակ գտնվող Լեւոն Սաֆարյանը 2008 թվականի մարտի 1-ի դեպքերի ժամանակ քրեական գործով անցնող Գեւորգ Սաֆարյանի որդին է: Հիշեցնենք, որ Արաբկիրի թաղապետարանի չարաշահումների գործով մեղադրյալներից 5-ի, այդ թվում՝ երկու պաշտոնատար անձանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, մյուս 3 անձանց նկատմամբ՝ բացակայելու արգելքը:

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյանը պաշտոնին նշանակվել է 2020 թվականի ապրիլի 13-ից: Նա անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի մասին հայտարարագիրը ներկայացրել է 2024 թվականի մայիսի 31-ին: Փոխնախարարը պաշտոնապես հայտարարագրել է, որ 2022 թվականին գնման եղանակով ձեռք է բերել բնակարան Երեւանի բազմաբնակարան շենքերից մեկում, ինչը հաշվետու տարվա վերջում պահպանվել է: Քրիստինե Ղալեչյանի հայտարարագրից տեղեկանում ենք, որ նա չունի տրանսպորտային միջոց: ՏԿԵՆ-ի տեղակալի բանկային հաշիվների մնացորդներից մեկը տարվա սկզբում եղել է զրոյական վիճակում, իսկ տարվա վերջում դարձել է 66.180 դրամ: Մյուսը 285.345 դրամ է եղել, որը տարվա վերջում դարձել է 1 մլն 398 հազար դրամ: Ղալեչյանի՝ հաշվետու տարվա եկամուտը կազմել է 15 մլն 800 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրության գումարն է: Հիշեցնենք, որ Քրիստինե Ղալեչյանը «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագիրն էր ղեկավարում. նա «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի պաշտոնակատարն է, եւ, ըստ տարբեր տեղեկությունների, նախարարությունում այնքան էլ ընդունված կերպար չէ: Ավելին՝ հաճախ կոնֆլիկտներ է ունենում իր տարբեր աշխատակիցների հետ, որոնք նախարարին բողոքում են տեղակալի պահվածքից:

ԶՐՈՒՅՑ

Ի՞ՆՉ ՎԵՐԼՈՒԾԵՑ ԱՅՍ ԸՆԹԱՑՔՈՒՄ Դ. ՏՈՆՈՅԱՆԸ

Ինչպես հայտնի է՝ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը 15 միլիոն գրավի դիմաց ազատ է արձակվել: Վերջինս այս պահին ներկայացել է Հակակոռուպցիոն դատարան:

Դավիթ Տոնոյանը գրեթե երեք տարի կալանավորված էր «անպիտան հրթիռների» գործով: Նախկին նախարարն այս գործով անցնող 7 մեղադրյալներից միակն էր, որ անազատության մեջ էր: Դատարանը մերժել էր Տոնոյանի կալանքը փոխելու բազմաթիվ միջնորդությունները:

Ինքը՝ նախկին նախարարը, չի ընդունում մեղադրանքը, հայտարարել է, որ իր նկատմամբ «թավշյա քաղաքական հետապնդում է իրականացվում»:

Ստորեւ ներկայացնում ենք ՊՆ նախկին նախարարի հետ հարցազրույցը՝ մանրամասն:

-Խնդրում եմ քաղաքական հարցեր չտալ, քանի որ քաղաքական հարցերի չեմ պատասխանելու: Այս պահին ես դեռ այդքան էլ չեմ պատկերացնում... երկար ժամանակահատված է անցել, ես պետք է կողմնորոշվեմ, պետք է հասկանամ՝ ինչ է կատարվում:

-Պարոն Տոնոյան, ԱԱԾ մեկուսարանում երեք տարի մնալուց հասկացաք, վերլուծեցիք:

-Իմիջիայլոց, դա ԱԱԾ մեկուսարանը չէր, դա Երեւանի արդարադատության նախարարությանն էր:

-Այդ ընդացքում վերլուծեցի՞ք, թե ինչու Նիկոլ Փաշինյանը Ձեզ հետ այդպես վարվեց, կամ այսօրվա իշխանությունը, եթե չեք ցանկանա քաղաքական ինչի հարցը, վերլուծեցի՞ք Ձեզ համար:

-Շատ մանրամասն:

-Ձեզ քաղաքական հալածյալ համարո՞ւմ եք, պարոն Տոնոյան:

-Ես կրկնում եմ, որ ժամանակին իմ հայտարարած որեւիցե բառից չեմ հրաժարվում, եւ հիմա էլ յուրաքանչյուր բառիս տակ եւս մեկ անգամ կստորագրեմ: Սակայն մնացած հարցերի համար, քանի որ անդադար փոփոխություններ են կատարվում, այնպես կազմակերպենք, որ ես հասունացած լինեմ՝ որեւէ բան ասելու:

Ես կարծում եմ, որ անվտանգության ապահովման վերաբերյալ լուրջ խնդիրներ ունենք հիմա, որին պետք է լուծում տալ: Ես թե՛ իշխանությանը, թե՛ ընդդիմությանը ասում եմ, որ կարող եմ դրան մասնակից դառնալ, բայց ոչ քաղաքական նպատակներով:

-Ձեր մայրիկին տեսնելու վերաբերյալ ի՞նչ կասեք:

-Ես գնացի, մեկ անգամ մայրիկիս տեսա:

-Բայց դա դարձավ մեծ պատմություն:

-Ոչինչ, ես դուրս եկա, ոտքով գնացի մայրիկիս մոտ:

-Պատկերացնո՞ւմ էիք, որ դա կարող է մեծ պատմություն դառնալ: Այդ փաստով ԱԱԾ մեկուսարանի տնօրենի ազատեցին, քրեակատարողական ծառայության պետի ազատեցին, մեծ պատմություն դարձավ:

-Եկեք հիմա այդ հարցերին չպատասխանեմ, որովհետեւ նույնիսկ դատավորն է եղել Բարձրագույն դատական խորհրդի: Ինչը կապված է դատարանի հետ՝ չեմ մեկնաբանի, փոխարենը խնդրում եմ պահանջ, որ դատական նիստերը լինեն հրապարակային: Ես դա պահանջում եմ:

-Այսօր (խմբ.) նման պահանջ ներկայացնելո՞ւ եք:

-Դեռեւս այդ մասին հստակ չեմ մտածել, քանի որ չեմ զգացել լրատվական դաշտի աջակցությունն այդ հարցում: Եթե ցանկանում եք, որ նիստերը լինեն հրապարակային կարծում եմ՝ խնդիր չկա: Կան որոշ նիստեր, իհարկե, որոնք կարելի է փակել:

-Պարոն Տոնոյան, Դուք Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք միակն էիք, որ իր «կաբինետում» նշանակվեցիք ու շատ դաժան պատժի արժանացաք՝ երեք տարի գտնվելով կալանքի տակ: Ինչո՞ւ: Ի՞նչն էր պատճառը, որ այդկերպ վարվեցին Ձեզ հետ:

-Ինչո՞ւ եք հարցնում, ուզում եք՝ խեղճանա՞մ: Ես գիտեմ՝ ինչու, սակայն չեմ ասի: Միայն թե հուսով եմ, որ նոր փորձաքննություն կնշանակվի: Ես ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ թե՛ գնման պահին, թե՛ գնումից երկար ժամանակ անց, թե՛ այսօր այդ հրթիռները պիտանի են կիրառության համար:

-Օդանավակայանում անցկացված դատական նիստերի ընթացքում էլ է դա ապացուցվել, այնպես չէ՞:

-Այնտեղ զննվել են պարզապես: Կարծում եմ՝ կասկած ունեցողների համար այդ կասկածները փարատվել են:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ

«Դեռեւս ցանկություն չունեմ քաղաքականությամբ զբաղվելու». դատավարությունից առաջ այսօր լրագրողների հետ զրույցում ասաց պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը:

«Խոսքն իշխանության համար պայքարի մասին է. քաղաքականության մեջ ես եղել եմ 30 տարի, բայց անվտանգային քաղաքականության համար: Ես երբեք իշխանության համար պայքարի մեջ չեմ եղել»,-ասաց Տոնոյանը:

«Անվտանգության ապահովման հետ կապված՝ պետությունը լուրջ խնդիրներ ունի հիմա, որոնց պետք է լուծումներ տան»,- հավելեց Տոնոյանը:

«Ես թե՛ իշխանությանը եւ թե՛ ընդդիմությանն ասում եմ՝ ես կարող եմ դրան մասնակից դառնալ, բայց ոչ քաղաքական նպատակներով»,-տեղեկացրեց նա:

Նշենք, որ օրեր առաջ Տոնոյանը 15 միլիոն գրավի դիմաց ազատ արձակվեց:

Հիշեցնենք, որ գրեթե երեք տարի նախկին նախարարը կալանավորված էր «անպիտան հրթիռների» գործով: Այս գործով անցնող 7 մեղադրյալներից նա միակն էր, որ անազատության մեջ էր: Դատարանը մերժել էր Տոնոյանի կալանքը փոխելու բազմաթիվ միջնորդությունները:

ՀՈՒՍՈՎ Է՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵԱՏՄ-ԻՑ ՉԻ ՀՐԱԺԱՐՎԻ

Մոսկվան հուսով է, որ Հայաստանը ԵԱՏՄ-ից չի հրաժարվի ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի պատճառով: Այս մասին ասել է ՌԴ ԱԳՆ ԱՊՀ երկրների առաջին դեպարտամենտի տնօրեն Միքայել Աղասանդյանը:

«Մոսկվայի եւ Երեւանի հարաբերությունները ԵԱՏՄ շրջանակում հիմնված են փոխշահավետ համագործակցության վրա, եւ Երեւանին ձեռնտու է ԵԱՏՄ-ում լինելը»,- ասել է Աղասանդյանը:

Նրա խոսքով՝ ՀՀ-ն «ընկել է Արեւմուտքի ծուղակը», որը միայն ներդրումներ, տեխնոլոգիաներ ու պայծառ ապագա է խոստանում, իսկ (մջբ.) «թե ինչ է ստացվում դրանից, բոլորը շատ լավ գիտեն»:

ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ԵՐԵԽԱ Է ՈՒՆԵՑԵԼ

Նախկին ՔՊ-ական պատգամավոր Արգիշտի Մեխակյանը որդի է ունեցել:

Մեխակյանը ֆեյսբուքյան անձնական էջի story բաժնում լուսանկարներ է հրապարակել նորածնի հետ, ինչից ակնհայտ է, որ լրացել է երեխայի 40 օրականը:

Հիշեցնենք, որ նախկին ՔՊ-ական պատգամավորը ներկայումս հանդիսանում է Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավարը, իսկ իր մանդատը վայր է դրել 2020 թվականին՝ 44-օրյա պատերազմից հետո՝նշելով, որ չի համակերպվում եղածի հետ:

Մանդատը վայր դնելուց հետո՝ նույն թվականի դեկտեմբեր ամսին Մեխակյանը վարչապետ Փաշինյանի որոշմամբ նշանակվել էր Արմավիրի մարզպետի տեղակալ:

Նշենք, որ վերջինս ազատամարտիկ, լեգենդար հրամանատար Մեխակ Մեխակյանի որդին է, որի անունով Ջեբրայիլը կոչվել է Մեխակավան, եւ ով էլ Արցախն ազատագրողներից մեկն էր:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ

ԼՈՒԿԱՇԵՆԿՈՅԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն հայտարարել է, որ հետխորհրդային տարածաշրջանի որոշ երկրներ «ցանկանում են Ռուսաստանից ինչ-որ բան վերցնել, բայց փոխարենը ոչինչ չտալ»: Այս մասին նա ասել է Россия հեռուստալիքին տված հարցազրույցում:

«Բելառուսն ու Ռուսաստանը, փաստացի, նույն նավակի մեջ են: Շրջվելու դեպքում երկուսս էլ կխեղդվենք՝ եւ՛ Ռուսաստանը, եւ՛ Բելառուսը: Ինչո՞ւ թաքցնենք: Մենք չենք սկսում խորամանկել՝ ինչպես մեր որոշ հետխորհրդային պետություններն են անում: Նրանք ուզում են Ռուսաստանից ինչ-որ բան վերցնել, բայց փոխարենը՝ ոչինչ չտալով»,-ասել է Լուկաշենկոն:

Նրա խոսքով՝ այդպես չի կարող շարունակվել, եւ պետք է միասնական լինել:

«Հեռու չէ այն ժամանակը, երբ դուք կգաք՝ նույն Ռուսաստանից աջակցություն եւ օգնություն խնդրելու: Ուրիշ օգնող չկա: Երբ Ղազախստանում ինչ-որ բան եղավ, ո՞ւմ դիմեցին, Չինաստանի՞ն, Հնդկաստանի՞ն, Պակիստանի՞ն: Ո՛չ, Պուտինից օգնություն: Եվ ՀԱՊԿ-ն այնտեղ ուժեր տեղակայեց, կես օր շարունակ մեր ինքնաթիռները վայրէջք էին կատարում այնտեղ, եւ ամեն ինչ իրենց տեղը դնում»,- հայտարարել է Լուկաշենկոն՝ շեշտելով, որ սա որպես նախատինք չի ասում:

Բելառուսի նախագահը վստահություն է հայտնել, որ արտակարգ իրավիճակների դեպքում ԱՊՀ երկրները կդիմեն Մոսկվայի ու Մինսկի օգնությանը: Նա նաեւ կոչ է արել չխզել հետխորհրդային տարածաշրջանում կառուցված տնտեսական կապերը:

«Ի՞նչ է, Ղազախստանին կամ Ուզբեկստանին իրենց ապրանքներով սպասում են Ամերիկայո՞ւմ, թե՞ Եվրամիությունում: Ո՛չ, նրանք խնդրում են Ռուսաստանում վաճառել դրանք: Կա ընդհանուր շուկա: Ինչո՞ւ կորցնենք այն, ինչ ունենք, եկեք ավելացնենք եղածը», - նշել է նա:

Լուկաշենկոն անդրադարձել է նաեւ Հայաստանի ղեկավարության քաղաքականությանը:

«Ո՞ւմ են պետք հայերը, բացի մեզնից: Ոչ մեկին պետք չեն: Թող զարգացնեն իրենց տնտեսությունը եւ սեւեռվեն նրա վրա, ինչ ունեն: Ի՞նչ Ֆրանսիա, ի՞նչ Մակրոն: Վաղը Մակրոնը չի լինի, եւ բոլորը կմոռանան Հայաստանի մասին»,-ասել է նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՄՆ-Ն՝ ԱՌԱՋՆՈՐԴ

Ամերիկայի նախագահ Ջո Բայդենը պնդում է, որ միայն Միացյալ Նահանգները կարող է լինել համաշխարհային առաջնորդ:

«Եվ սա կատակ չէ, ես բառացիորեն եմ ասում. ո՞վ կարող է ղեկավարել աշխարհը, բացի Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Ամերիկան հաղթում է եւ դա կլինի հոգուտ աշխարհի»,-հայտարարել է նա Չիկագոյում Դեմոկրատների ազգային համագումարում, որտեղ պաշտոնապես պետք է դառնար նախագահի թեկնածուն առաջիկա՝ նոյեմբերին կայանալիք ընտրություններում: Սակայն համակուսակիցների ճնշման ներքո Բայդենը ստիպված եղավ հուլիսին դուրս գալ ընտրապայքարից՝ էստաֆետը փոխանցելով փոխնախագահ Քամալա Հարիսին:

Բայդենը հիշեցրել է նաեւ, որ Հանրապետական կուսակցությունից բարձրագույն կառավարական պաշտոնի թեկնածու Դոնալդ Թրամփը «Ամերիկան անվանում է ձախողված երկիր»:

«Մտածեք այն ուղերձի մասին, որը նա ուղարկում է աշխարհին, երբ խոսում է Ամերիկայի մասին՝ որպես ձախողվող երկրի մասին»,-նման ուղերձով է դիմել Բայդենն իր համաքաղաքացիներին:

ՀԱՅԿ ՄԱՄԻՋԱՆՅԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանն անդրադարձել է Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հայտարարությանը:

«Ոչ մեկին, ներառյալ՝Ալեքսանդր Լուկաշենկոյին, թող չթվա, թե կարող են Հայաստանի Հանրապետության հետ խոսել այնպես, ինչպես Նիկոլ Փաշինյանի հետ: Մեր ազգի ու պետության բնորոշիչ հատկանիշներից մեկը եղել է ու կլինի արժանապատվության զգացումը, եւ մենք այն վաղ թե ուշ կվերականգնենք», - նշել է պատգամավորը:

ԴԱՏԱՊԱՐՏՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 19-ին Թուրքիայի արտգործնախարարությունը X-ի սոցէջում «Մարդասիրական օգնության համաշխարհային օրվա» առիթով հայտարարություն է տարածել:

Հայտարարության մեջ Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչությունը հերթական անգամ դատապարտել է Իսրայելի կողմից Պաղեստինի Գազայի հատվածում իրականացվող գործողությունները եւ ընդգծել, որ դրանց ընթացքում իսրայելական կողմը սպանում է անգամ UNRWA-ի աշխատակիցներին: (UNRWA - ՄԱԿ-ի Մերձավոր Արեւելքում Պաղեստինի փախստականների օգնության եւ աշխատանքների գործակալություն):

«Գազայում ավելի քան 40 հազար անմեղ պաղեստինցու (մեծամասնությունը կանայք եւ երեխաներ) սպանած Իսրայելը, չի տարանջատում նույնիսկ հումանիտար օգնություն տրամադրող աշխատակցիներիներին, կամավորներին, այդ թվում՝ UNRWA-ի աշխատակիցներին եւ նրանց սպանելով՝ շարունակում է հանցագործությունները մարդկության դեմ»,- նշվել է գրառման մեջ:

COP 29

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉՊԵՏՔ Է ՄԱՄՆԱԿՑԻ»

«Նոյեմբերին Բաքվում COP 29-ի շրջանակներում ականատես ենք լինելու Ադրբեջանի կողմից փաստերի ու իրադարձությունների նենգափոխման, միջազգային հանրության աչքում սեփական ցեղասպան դիմագիծը փրկելու, ղասեռազմական հանցագործություններից միջազգային ուշադրությունը շեղելու ադրբեջանական շոուին, որը, համոզված եմ, ուղեկցվելու է հայ ժողովրդի ու նրա արժանապատվությունը վիրավորող հերթական քայլերով»:

Այդ մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է «Հայաստան» խմբակցության պատգամավոր, ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ Իշխան Սաղաթելյանը:

«Ամեն դեպքում, նոյեմբերին Բաքուն հյուրընկալելու է միջազգային հազարավոր պատվիրակների, այդ թվում՝ բարձր ու բարձրագույն մակարդակի (պետությունների ու կառավարությունների ղեկավարներ):

Խորհրդաժողովին մասնակցելու են միջազգային քաղաքական, իրավապաշտպան, բնապահպանական հարյուրավոր կազմակերպություններ, փորձագետներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Ադրբեջանական շոուն ամբողջացնելու համար դրան պակասելու է Հայաստանի Հանրապետության պաշտոնական մասնակցությունը, որի պարագայում Բաքվի բռնապետը իրեն ավելի հաստատուն կերպով կդիրքավորի իբրեւ տարածաշրջանային խաղաղությանն ու համակեցությանը միտված առաջնորդի:

Հայաստանի մասնակցությունը կօգնի լեգիտիմացնելու ադրբեջանական շոուն, նպաստելու այդ ցեղասպան երկրի միջազգային ընկալունակության բարձրացմանը:

Վերջերս Եվրոպական միության օրենսդիր եւ գործադիր իշխանության ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում կարեւորել եմ COP 29-ին ընդառաջ Ադրբեջանի վրա միջազգային ճնշման ուժեղացումը, մասնավորապես՝Բաքվում պահվող Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ու պահվող այլ անձանց անհապաղ ազատ արձակման եւ ՀՀ ինքնիշխան տարածքից ադրբեջանական օկուպացիոն ուժերի դուրս բերման համատեքստում:

Արդեն տեւական ժամանակահատված է, որ այս ուղղությամբ լայնածավալ աշխատանքներ է իրականացնում Հայ դատի համաշխարհային ցանցը:

Այս ուղղությամբ դրվատանքի արժանի աշխատանք է իրականացնում նաեւ Միջազգային քրեական դատարանի առաջին գլխավոր դատախազ, մեր ժողովրդի մեծ բարեկամ Լուիս Մորենո Օկամպոն, ով հանդես եկավ նաեւ աշխարհասփյուռ հայությանն ուղղված կոչով:

Կարեւոր եմ համարում ընդգծել, որ Հայաստանի իշխանությունների հնարավոր մասնակցության եւ պարտվածի հոգեբանությամբ նրանց կանխատեսելի քաղաքական վարքի պայմաններում մեր այն գործընկերները, որոնք պատրաստակամություն են հայտնել մինչեւ COP 29-ը եւ դրա ընթացքում հանդես գալ հստակ դիրքորոշումներով, ունենալու են տրամաբանական կաշկանդվածություն դիրքորոշումների արտահայտման հարցում:

Ուստի, Հայաստանը ներկայացնող որեւէ պատվիրակություն չպետք է մասնակցի COP 29-ին, իսկ մասնակցելու դեպքում՝ պետք է հստակ բարձրաձայնի Արցախում տեղի ունեցած էթնիկ զտման, բռնի ուժով տեղահանության, իրականացրած ցեղասպան քաղաքականության եւ Բաքվի բանտերում պահվող ռազմագերիների անհապաղ ազատ արձակման մասին:

Հակառակ պարագայում Հայաստանի օրվա իշխանությունը հերթական անգամ կփորձի լեգիտիմացնել Բաքվի բռնապետի ագրեսոր եւ հակահայ քաղաքականությունը»,-գրել է նա:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԽՋԵՆ ԿԱՊԵՐԸ ՌՈՒԵ-Ի ՀԵՏ

Ուկրաինայի Գերագույն ռադան քվեարկել է երկրի տարածքում Ռուս Ուղղափառ եկեղեցու (ՌՈՒԵ) եւ նրա հետ կապված կազմակերպությունների արգելման օգտին: Օրինագիծն ընդունվել է երկրորդ ընթերցմամբ:

«Կողմ» է քվեարկել 265 պատգամավոր: Ժելեզնյակի խոսքով՝ օրենքն ուժի մեջ կմտնի հրապարակումից 30 օր հետո:

«Ուկրաինայի ուղղափառ եկեղեցին կունենա 9 ամիս՝ ՌՈՒԵ-ի հետ կապերը խզելու համար», - գրել է խորհրդարանականը:

Օրենքի 5-րդ հոդվածը («Խղճի եւ կրոնական կազմակերպությունների ազատության մասին») լրացվում է ձեւակերպմամբ, որից հետեւում է, որ թույլ չի տրվում կրոնական կազմակերպությունների գործունեությունը, որոնք կապվում են եկեղեցու ազդեցության կենտրոնների հետ, որի ղեկավարող կենտոնը գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում:

6-րդ հոդվածի 16-րդ մասը լրացվում է այն կետով, որ խախտումների բացահայտման դեպքում կրոնական կազմակերպության գործունեությունը կարող է դադարեցվել դատական կարգով, ըստ գործադիր իշխանության կենտրոնական մարմնի հայցի, որն իրականացնում է կրոնի ոլորտի պետական քաղաքականությունը (կամ դատախազի հայցով):

ՊԱՇՏՈՆԻՑ ՉԵՆ ՀԵՌԱՑՐԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՔՊ-ից հեռացված Թաթուլ Բաղդասարյանին հեռացրել են «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Մարտունու մասնաճյուղի տնօրենի պաշտոնից այն պատճառով, որ վերջինս իր իսկ աշխատասենյակում փորձել է կաշառք վերցնել՝ շուրջ 300.000 դրամ, ինչն էլ տեղում պարզել են իրավապահները:

Հիշեցնենք, որ Թաթուլ Բաղդասարյանը եղել է «ՔՊ» կուսակցության անդամ, ով սոցիարթակներում ակտիվորեն կիսվում էր Նիկոլ Փաշինյանի բոլոր ելույթներով եւ գրառումներով, ինչպես նաեւ լուսանկարներ էր հրապարակում ՔՊ վերնախավի, այդ թվում՝ Նիկոլ Փաշինյանի հետ:

Չնայած վերը նշված հանգամանքներին՝2024 թվականի մայիսի 29-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Թաթուլ Բաղդասարյանին հեռացրել են ՔՊ կուսակցությունից:

Նաեւ հիշեցնենք, որ ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ Թաթուլ Բաղդասարյանին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Մարտունու մասնաճյուղի տնօրեն, 2023թ. հունիսի 5-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Կամոյի փողոցի 1-ին շենքի հասցեում գտնվող «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ Մարտունու մասնաճյուղի շենքում վիճաբանել էր մասնաճյուղի պահակ Արգիշտի Հարությունյանի հետ:

Վիճաբանության թեման եղել էր նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, ապա ֆիզիկական ներգործություն կատարելու դիտավորությամբ՝ երկու անգամ ապտակել էր վերջինիս դեմքին՝ պատճառելով նրան թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Թաթուլ Բաղդասարյանի հետ՝ պարզելու՝արդյոք կաշառք վերցնելու համար են նրան հեռացրել «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Մարտունու տնօրենի պաշտոնից եւ ՔՊ խմբակցությունից:

Մեզ հետ զրույցում Բաղդասարյանն ասաց, որ իրեն չեն հեռացրել տնօրենի պաշտոնից, այլ կազմակերպությունն է լուծարվել, որտեղ հիմա էկո-պարեկներն են, այսինքն՝ կաշառքի մասին տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ քննչական կոմիտեն ամփոփել է 2024թ. առաջին կիսամյակում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ ՀՀ ՔԿ ստորաբաժանումներում կատարված նախաքննության արդյունքները:

Հիշեցնենք, որ չնայած կոռուպցիոն հանցագործությունները քննչական ենթակայության կարգով քննվում են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում, սակայն բազմաթիվ դեպքերով ՀՀ քննչական կոմիտեն շարունակում է քննել նմանատիպ վարույթներ:

Ըստ այդմ՝ նշված ժամանակահատվածում Կոմիտեի վարույթում քննվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ 1.003 քրեական վարույթ, որը 46-ով կամ 4,3%-ով քիչ է 2023թ. Առաջին կիսամյակի համեմատ:

Նշված 1.003 քրեական վարույթից 32-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ եւ 60 անձի վերաբերյալ ուղարկվել դատարան, 132-ը կարճվել է, որից 104-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 28-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքերով: 90 վարույթով ավարտվել են վարութային գործողությունները, 112-ն ուղարկվել է այլ մարմին, 37 վարույթ միացվել է, իսկ 600 վարույթ փոխանցվել է 2024թ. 2-րդ կիսամյակ:

Քննվող վարույթները վերաբերել են մասնավորապես՝

. պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ մասնավորեցման ոչ ենթակա գույքը հանցավոր տարբեր սխեմաներով վարձակալության տալուն կամ օտարելուն, հողամասերի ինքնակամ զավթմանը,

. ուսումնական, բժշկական, համայնքային կամ պետական հաստատություններում աշխատակիցներին անաշխատ եկամուտներ հատկացնելու, կամ չկատարված ծախսերի, պետական պատվերի շրջանակներում չմատուցված ծառայությունների պայմաններում հավելագրումների եղանակով միջոցներ հափշտակելուն,

. առանձին հիմնարկներում ծառայությունների մատուցման գնման պայմանագրերով նախատեսված աշխատանքները չկատարված կամ թերի կատարված լինելու պայմաններում ամբողջ գումարները փոխանցելով վատնում կատարելուն,

. ծառայության ձեռք բերման մրցույթների ընթացքում մրցույթի մասնակիցների միջեւ արհեստականորեն, պաշտոնական դիրքի չարաշահմամբ, անհավասար պայմաններ ստեղծելուն,

. առանձին համայնքներում քաղաքացիներից հավաքագրվող վարձավճարները, պաշտոնական անփութության արդյունքում չմուտքագրելուն եւ հափշտակությանը,

. ուսումնական, պետական, համայնքային հաստատություններում պաշտոնական դիրքի չարաշահմամբ հափշտակություններ, պաշտոնական կեղծիքներ եւ փաստաթղթերի կեղծիքներ կատարելուն,

. պետական ոլորտային աջակցության ծրագրերի շրջանակներում չարաշահումներին,

. փողերի լվացմանը եւ այլն:

Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով իրականացված մինչդատական վարույթի ընթացքում ավարտված քրեական վարույթներով պարզված՝ պատճառված գույքային վնասը, նախնական հաշվարկներով, կազմել է 7.446.326.000 ՀՀ դրամ, որից նախաքննության ընթացքում վերականգնվել է 675.420.000 ՀՀ դրամը:

Վերականգնվածից 657.630.000 ՀՀ դրամը եղել է պետությանը պատճառված վնասը, 9.798.000 դրամը՝ համայնքներին, 4.000.000 ՀՀ դրամը՝ իրավաբանական, իսկ 3.992.000 ՀՀ դրամը՝ ֆիզիկական անձանց պատճառված վնասը:

Ընդ որում՝ 2024թ. առաջին կիսամյակում կոռուպցիոն հանցագործություններով վնասի վերականգնման ցուցանիշը ավելի քան 4 անգամ գերազանցում է 2023թ. նույն ժամանակահատվածի արդյունքները՝ (156.126.000 ՀՀ դրամ):

Քրեական վարույթներով ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ՝ պատճառված վնասի մնացած մասի վերականգնումը եւս ապահովելու ուղղությամբ:

Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԹՄՐԱՆՅՈՒԹԸ ՈՉՆՉԱՑՎԵԼ Է

ՆԳՆ-ից տեղեկացնում են, որ օգոստոսի 12-18-ը հանրապետության տարածքում հայտնաբերվել եւ այրման միջոցով ոչնչացվել է 12 828 կգ կանեփի եւ 5 կգ կակաչի վայրի աճած զանգված:

«Տնամերձ 27 հողամասում հայտնաբերվել է կանեփի 1263 բույս:

Օպերատիվ տեղեկությունների իրացման արդյունքում՝ ապօրինի թմրաշրջանառությունից առգրավվել է՝ 560 գրամ մարիխուանա, 4.18 գրամ մեթամֆետամին, 5 գրամ սփայս, 21.5 մլ մեթադոն եւ 62.12 գրամ ափիոն տեսակի թմրամիջոց:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ բացատրական աշխատանքի արդյունքում հայտնաբերվել են նաեւ տարբեր տրամաչափի 196 փամփուշտ, 3 ատրճանակ, 3 հրացան:

Միջոցառման շրջանակում հայտնաբերվել է 25 հետախուզվող:

«Կանեփ-կակաչ-2024» համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումը շարունակվում է»,- ասված է հաղորդագրության մեջ:

ԱՐԳԵԼՎԱԾ ԻՐԵՐ

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Սեւան» տարածքային բաժնում ստացվել էին օպերատիվ տեղեկություններ այն մասին, որ փորձ է արվելու փաթեթի ներնետման միջոցով «Սեւան» քրեակատարողական հիմնարկ անցկացնել արգելված իրեր:

Իրացնելով ստացված օպերատիվ տեղեկությունները՝ «Սեւան» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի ծառայողները վերոնշյալ տարածքային բաժնի ծառայողների հետ համատեղ օգոստոսի 19-ին՝ ժամը 09:50-ի սահմաններում, զննության են ենթարկել հիմնարկի ողջ տարածքը: Արդյունքում՝ հիմնարկի մասնաշենքերից մեկին հարող խոտածածկի վրայից հայտնաբերել են փնտրվող փաթեթը՝ ամրացված թելով եւ լուսարձակող կրակայրիչով: Փաթեթում առկա է եղել 2 բջջային հեռախոս:

Դեպքի առթիվ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ արգելված իրերի պատկանելիությունը բացահայտելու ուղղությամբ:

ՍՊԱՌՆԱԼԻՔ

Օգոստոսի 19-ին՝ ժամը 23:40-ին, ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնել է, որ «Տոյոտա» մակնիշի տաքսի մեքենայի վարորդը 400 մետրի համար իրենից 1800 դրամ է պահանջել, որը ինքը չի տվել, սակայն դրանից հետո նա եկել է իր տուն եւ ատրճանակի սպառնալիքով վերցրել է 1400 դրամը:

Ոստիկանության Շենգավիթի բաժնի եւ Չարբախի բաժանմունքի ծառայողները ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզել են վարորդի ինքնությունը: Երեւանի բնակիչ 33-ամյա երիտասարդը օգոստոսի 20-ի գիշերվա ժամը 2:10-ին Բաբաջանյան փողոցի շենքերից մեկի բակում հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է Շենգավիթի բաժին: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է 9 մմ տրամաչափի գազային ատրճանակ: Նա եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են վարույթն իրականացնող մարմին:

ԼՈՒՐԵՐ

ՈՒՂԵՎՈՐԸ ԿԵՂԾ ԹՂԹԱԴՐԱՄ Է ԻՐԱՑՐԵԼ

Օգոստոսի 19-ին՝ ժամը 23:00-ին, ոստիկանություն զանգահարած քաղաքացին հայտնել է, որ Փոքր Վեդի գյուղում փողոցային առեւտուր անելիս իրեն վճարել են կեղծ դրամ: Հայտնել է նաեւ, որ վճարողները եղել են «Նիսան» մակնիշի մեքենայով եւ գնացել են դեպի Ջերմուկ:

Հաղորդումը փոխանցվել է ոստիկանության Արարատի բաժին, որտեղից էլ օպերատիվ խումբը մեկնել է ահազանգի հետքերով:

Պարզվել է, որ գյուղմթերքի վաճառքի կետ մոտեցած մեքենայի վարորդը վճարել է 10 հազար դրամանոց եւ մթերքից բացի ստացել նաեւ 6750 դրամ մանրը:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բաժնի ծառայողները, համագործակցելով Արարատի մարզի պարեկների հետ, պարզել են վարորդի ինքնությունը. նա Երեւանի բնակիչ էր՝ 41-ամյա տղամարդ: Ահազանգից մոտ մեկուկես ժամ անց Երասխ-Երեւան ճանապարհի 26-րդ կմ-ին՝ Փոքր Վեդի գյուղի վարչական տարածքում, վարորդն ու իր ուղեւորը՝ երեւանցի 45-ամյա տղամարդը, հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել են ոստիկանության Արարատի բաժին: Այստեղ պարզվել է, որ կեղծ թղթադրամն իրացրել է ոչ թե վարորդը, այլ ուղեւորը:

Անձնական խուզարկությամբ ուղեւորի դրամապանակում հայտնաբերվել է 17 հատ 10 հազար եւ 11 հատ 20 հազար դրամ անվանական արժեքով հուշանվեր թղթադրամ:

Հայտնաբերվածը փաթեթավորվել եւ տղամարդկանց հետ ներկայացվել է վարույթ իրականացնող մարմին: «Նիսանը» տեղափոխվել է բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Հանգամանքները պարզվում են:

ԴԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ

«Դատարանը ճանաչեց Հայաստանում պրո-թուրքական կուսակցության համագումարի ժամանակ իմ ձերբակալությունը, եւ ՁՊՎ-ում իմ 3-օրյա կալանքը համարեց ոչ իրավաչափ»: Այս մասին ֆեյսբուքյան էջում գրել է ակտիվիստ Արթուր Չախոյանը:

«Կրկին անգամ ես ապացուցեցի, որ իմ բոլոր գործողություններն օրենքի շրջանակներում են եւ ՈՉ մի անօրինական գործողություն չեմ կատարում: Այս իշխանությունն ինձ ենթարկում է քաղաքական հետապնդման եւ ենթարկում է քաղաքական ճնշումների: Այս իշխանությունը փուչիկ եւ շինծու գործերով փորձում է հանրության մոտ ինձ ներկայացնել որպես հանցագործ, այն դեպքում, երբ ես իմ օրինական գործողությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում չեղարկեցի պրոթուրքական կուսակցության համագումարը»,- գրել է նա:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 16-ից 19-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 235 դեպք, որից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՈՒԺԵՂԱՑՆՈՒՄ Է ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի Ոսկեպար-Բաղանիս հատվածում՝ Բաղանիս-Այրումից վերեւ, սահմանազատման անվան տակ Ադրբեջանին նոր հանձնված տարածքից բարձր՝ բարձունքում ադրբեջանական զինուժը ռադիոաշտարակ է կանգնեցրել, որի կողքին մշտապես կանգնած է ռադիոհետախուզական սարքավորումներով հագեցած արծաթագույն «Կամազ» մակնիշի ավտոմեքենա: Ադրբեջանն ուժեղացրել է Հայաստանի դեմ ռադիոհետախուզությունը: Սահմանամերձ Ոսկեվանից Կոթի գնալիս, նաեւ միջպետական ավտոճանապարհով սահմանամերձ Բերդավանից Ջորական գյուղ գնալիս, երբ վարորդները մեքենայում մագնիտոֆոն կամ հայկական ռադիոալիքներ են միացնում, եթերում միայն ադրբեջանական ռադիոալիքներ են լինում:

ԳԱՂՏՆԱԳՐՈՒՄ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը 2024թ. հուլիսի 23-ին որոշում է ընդունել Տավուշի մարզպետի աշխատակազմում գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը մշակելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի ղեկավար է նշանակվել մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանը, անդամներն են մարզպետարանի վարչությունների պետերը եւ իրավաբանական բաժնի պետը: Ի՞նչ նպատակ է հետապնդում մարզպետարանում գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված ցանկեր մշակելու որոշումը. գուցե Տավուշի մարզից Ադրբեջանին նոր տարածքներ են հանձնվելու: Մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք ուղել՝ Ադրբեջանին հանձնված տարածքների դիմաց պետական բյուջեից ինչքա՞ն գումար է նախատեսված Կիրանցի բնակիչներին փոխհատուցելու համար, ինչքա՞նն է նրանց արդեն տրվել, ի՞նչ սկզբունքով է որոշվել փոխհատուցման չափը: Մարզպետարանից պատասխանել են. «Պահանջվող տեղեկատվությունը ենթակա չէ տրամադրման, քանի որ այն ունի գաղտնիության դրոշմագիր»

ԾՐԱԳԻՐԸ ՁԱԽՈՂՎԵԼ Է

Տավուշում 4 դպրոցի շենք է կառուցվում՝ Կիրանցում, Գանձաքարում, Բագրատաշենում, Դովեղում: Սահմանամերձ Դովեղ գյուղի դպրոցի շինարարությունը շուրջ 5 ամիս է՝ դադարեցված է: Շինարարությունը սկսվել է 2022թվականի վերջին, շինարարության ավարտի ժամկետի երկարաձգումից հետո այն պետք է ավարտվեր 2024 թվականի հունիսի կեսին: Դպրոցի շենքը կառուցվում էր պետական բյուջեի 1 միլիարդ 218 միլիոն դրամ ֆինանսավորմամբ, շինարարությունը իրականացնում էր «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք արել՝ ե՞րբ է գործարկվելու Դովեղի նորակառույց դպրոցը: Մարզպետարանից պատասխանել են. «Դովեղի նորակառույց դպրոցի շինարարական աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են կապալառուի ոչ պատշաճ աշխատանքների պատճառով»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ՏԱՐԱԾՎՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՎԱՐԱԿԻ ՊԱՏՃԱՌ Է ԴԱՌՆՈՒՄ ՄՈԾԱԿԻ ԽԱՅԹՈՑԸ

Ինֆեկցիոն հիվանդությունները մարդկության ողջ պատմության ընթացքում հանդիսացել են կյանքի եւ մահվան անբաժանելի մասը: Հակաբիոտիկների եւ պատվաստումների հայտնաբերումը բեկումնային եղավ ինֆեկցիոն հիվանդություններից մահացության դեպքերի կտրուկ նվազման առումով, սակայն գիտատեխնիկական զարգացումը, իր բոլոր դրական հետեւանքներով հանդերձ, ունեցավ նաեւ այնպիսի բացասական հետեւանք, ինչպիսին գլոբալ տաքացումն է:

Երկիր մոլորակի վրա ջերմաստիճանի աստիճանական բարձրացումը հանգեցնում է ինֆեկցիոն հիվանդությունների աշխարհագրական տարածման փոփոխության: Այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք նախկինում գրանցվել են միայն տրոպիկական եւ սուբտրոպիկական երկրներում, այսօր արձանագրվում են աշխարհի տարբեր երկրներում:

Քովիդի համաճարակից հազիվ ուշքի եկած՝ արդեն լսում ենք նոր վիրուսի մասին: Ինչպես հայտնի է՝ Հայաստանում արձանագրվել է Արեւմտյան Նեղոսի տենդի 20 դեպք՝ 1 մահվան ելքով: Բոլոր հիվանդները (25-65 տարեկան) հոսպիտալացված են, նրանց վիճակը գնահատվում է միջինից մինչեւ ծանր:

«Միքայելյան» համալսարանական հիվանդանոցի Ինֆեկցիոն կլինիկայի բժիշկ, ԵՊԲՀ ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի դոցենտ Ալվարդ Հովհաննիսյանը ArmLur.am-ի հետ զրույցում նշում է, որ Արեւմտյան Նեղոսի տենդը վիրուսային վարակիչ հիվանդություն է, փոխանցվում է մոծակների, տզերի միջոցով. մարդուց մարդուն չի փոխանցվում:

Բժշկի փոխանցմամբ՝ այս վիրուսն առաջին անգամ անջատվել է 1937թ.-ին Ուգանդայում բնակվող հիվանդ կնոջից: Սկսած 1960թ.-ից՝ Եվրոպայում պարբերաբար գրանցվել են այս հիվանդության դեպքեր, երբեմն նույնիսկ բռնկումների ձեւով: «Հիվանդությունը մարդուն փոխանցվում է վարակված մոծակի խայթոցի հետեւանքով, սովորաբար ընթանում է առանց ախտանիշների, հազվադեպ կարող է դիտվել հիվանդության ծանր ընթացք՝ առաջացնելով կենտրոնական նյարդային համակարգի ախտահարում՝ էնցեֆալիտ կամ մենինգիտ: Ռիսկի խմբում են հիմնականում ուղեկցող, քրոնիկ հիվանդություններ ունեցող մարդիկ (սիրտ-անոթային, օնկոլոգիական հիվանդություններ, շաքարային դիաբետ եւ այլն), մեծահասակները: Հիվանդությունը դրսեւորվում է բարձր ջերմությամբ, համառ գլխացավերով, փսխումներով, գիտակցության խանգարմամբ, տարածուն մկանացավերով, հոդացավերով, մարմնի ցանավորմամբ: Հիվանդության բուժումը ախտանշանային է, յուրահատուկ հակավիրուսային բուժում, ինչպես նաեւ արդյունավետ պատվաստում գոյություն չունի»,-նշում է Ալվարդ Հովհաննիսյանը:

Բժիշկը նշում է, որ հիվանդությունն ախտորոշվում է արյան լաբորատոր հետազոտությամբ:

Արդյո՞ք սա կարող է դառնալ 2-րդ քովիդ, բժիշկ-ինֆեկցիոնիստը քիչ հավանական է համարում, քանի որ վարակը մարդուց մարդու չի փոխանցվում, իսկ մոծակներն ակտիվ են միայն ամռան ամիսներին:

«Այժմ դեպքեր կան ե՛ւ ԱՄՆ-ում, ե՛ւ Եվրոպայում, ե՛ւ Ասիայում, իսկ մեր երկրում վտանգավոր տարածքներ են խոնավ ու շոգ վայրերը, բայց պետք է հաշվի առնել, որ մոծակները կարող են տեղափոխվել մի տարածքից մյուսը»,-ասում է Ալվարդ Հովհաննիսյանը:

Արեւմտյան Նեղոսի տենդ հիվանդությունից պաշտպանվելու լավագույն միջոցը, բժշկի փոխանցմամբ, մոծակների խայթոցից խուսափելն է, ինչը հնարավոր է՝ կրելով փակ հագուստ, կիրառելով միջատասպան ցանցեր եւ միջոցներ, չորացնելով ջրի հնարավոր աղբյուրները:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՏԱՔՍԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

ՀԴՄ-Ի ՊԱՐՏԱԴԻՐ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋ

Պետական եկամուտների կոմիտեն աշխատանքային քննարկում է նախաձեռնել մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղեւորափոխադրումների իրականացման նոր կարգավորումների շուրջ, որին մասնակցել են ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը եւ ֆիզիկական անձինք: Այս մասին հաղորդագրություն է տարածել պետական եկամուտների կոմիտեն:

ՊԵԿ նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանը եւ կոմիտեի մասնագետները հանդիպման մասնակիցներին ներկայացրել են ոլորտում սպասվող նոր կարգավորումները, մասնավորապես, օրենսդրական փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտնում 2024 թ. սեպտեմբերի 1-ից:

Օրենսդրական փոփոխությունների համաձայն՝ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղեւորափոխադրումներ կարող են իրականացնել այն կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը կամ ֆիզիկական անձինք, որոնք միացել են հարկային մարմնի էլեկտրոնային համակարգին: Յուրաքանչյուր պատվերի իրականացման դեպքում նրանք պարտավոր են պատվիրատուին տրամադրել պատվերի վճարման էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն (բացառությամբ՝ էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայության միջոցով ուղեւորափոխադրումներին): Սեպտեմբերի 1-ից վերջիններիս համար էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է:

Հանդիպման մասնակիցներին իրազեկվել է նաեւ, որ թեթեւ մարդատար ավտոմոբիլներով ուղեւորափոխադրումներ կարող են իրականացվել նաեւ էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայության միջոցով: Այս դեպքում պատվերի վճարման էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնը պատվիրատուին տրամադրում է էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը:

Այսպես, կանխիկ դրամով վճարումների դեպքում պետական տուրքը սահմանվել է յուրաքանչյուր փոխադրման ընդհանուր արժեքի՝

- 2 տոկոսի չափով՝ 2024 թ.սեպտեմբերի 1-ից
- 3.5 տոկոսի չափով՝ 2025 թ. հունվարի 1-ից
- 5 տոկոսի չափով՝ 2026 թ. հունվարի 1-ից:

Անկանխիկ դրամով վճարումների դեպքում յուրաքանչյուր փոխադրման ընդհանուր արժեքի՝

- 1.5 տոկոսի չափով՝ 2024 թ.սեպտեմբերի 1-ից
- 2.5 տոկոսի չափով՝ 2025 թ. հունվարի 1-ից
- 4 տոկոսի չափով՝ 2026 թ. հունվարի 1-ից:

Պետական բյուջե վճարման ենթակա պետական տուրքի վերաբերյալ հայտարարությունը հարկային մարմին է ներկայացվում բացառապես էլեկտրոնային եղանակով՝ մինչեւ յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 10-ը ներառյալ:

Իսկ պետական տուրքը վճարվում է յուրաքանչյուր ամսվա համար:

● Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 35 պատահար. 5 մարդ մահացել է, 50-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՆԵՐԿՐՎՈՂ ԿՈՆՅԱԿԸ ՄԱՔՈՒՐ ՉԷ

Ռուսական լրատվամիջոցները հայտնում են, թե ռուսական խանութներում վաճառվող հայկական կոնյակի 90 տոկոսն անվտանգ չէ, Հայաստանի սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինն այս առնչությամբ պաշտոնական նամակ կամ գրություն ռուսական կողմից չի ստացել: ՏԱՍՍ-ը տեղեկացնում է, որ ծանոթացել է «Անտիկոնտրաֆակտ» միջազգային ասոցիացիայի եւ Կոնյակ, սպիրտ եւ ալկոհոլային խմիչքներ արտադրողների միության համատեղ ուսումնասիրությանը:

Ըստ լրատվամիջոցի՝ ուսումնասիրության համար ձեռք է բերվել ավելի քան 20 ապրանքանիշի կոնյակի 200 նմուշ: Ուսումնասիրության արդյունքում դրանցից 177-ում, այսինքն՝ 89 տոկոսում, հայտնաբերվել են խախտումներ եւ պարզվել է, որ դրանց գրեթե կեսը պարունակում է ոչ խաղողի սպիրտ:

Neuralink–Ը ՉԻՊ Է ՏԵՂԱԴՐԵԼ 2–ՐԴ ՄԱՐԴՈՒ ՈՒՂԵՂՈՒՄ



Իլոն Մասկի Neuralink ընկերությունն արդեն երկրորդ կամավորի ուղեղում տեղադրել է իր սարքը, որն անդամալույծ բուժառուներին հնարավորություն է տալիս միայն մտքի միջոցով օգտագործել թվային սարքեր:

Neuralink-ը դեռ իր սարքի փորձարկման փուլում է: Սարքն օգտագործող առաջին բուժառուն հնարավորություն է ստացել խաղալ տեսախաղեր, օգտվել համացանցից, գրառումներ անել սոցիալական ցանցերում եւ շարժել համակարգչի կուրսորը:

Kaspersky

ՎԱՐՁՈՒՅԹՈՎ ԳՐՈՒՀ, ՈՐԸ ՍԿՍՎՈՒՄ Է 99 ԴՈԼԱՐԻՑ

Kaspersky Digital Footprint Intelligence-ի փորձագետները վերլուծել են դարկնետում եւ Telegram-ի մասնագիտացված ալիքներում բոտնետների շահագործման հետ կապված ծառայությունների մատուցման մասին հայտարարությունները:

Բոտնետը վնասաբեր ծրագրերով վարակված սարքերի ցանց է: Դրանց օգնությամբ չարագործները կարող են ավտոմատացված զանգվածային գրոհներ իրականացնել, այդ թվում՝ DDoS: Վառ օրինակներից մեկը Mirai բոտնետն է: Այն սկանավորում է ցանցը թույլ գաղտնաբառերով IoT սարքեր գտնելու համար, այնուհետեւ հասանելիություն ստանում դրանց՝ լռելյայն օգտագործվող հաշվառման տվյալների միջոցով, եւ վարակում դրանք:

«Կասպերսկի» ընկերությունը տեղեկացնում է, որ պատրաստի բոտնետների օգտագործման արժեքը սկսվում է 99 ԱՄՆ դոլարից, եւ դրանք հաճախ շահագործվում են չարագործների կողմից: Ընդհանուր առմամբ, նման ցանցերի առեւտրային օգտագործման տարածված տարբերակներից են վարձակալությունը, պատվերով մշակումը, ինչպես նաեւ արտահոսած սկզբնական կոդով էժան բոտնետների ձեռքբերումը:

Ռուսաստանում խոցելի խելացի սարքերի թիվը կրկնապատկվել է: Բոտնետներ ստեղծելու համար կարող են օգտագործվել օգտատերերի եւ կորպորատիվ խոցելի սարքեր, օրինակ՝ թույլ գաղտնաբառերով. դրանք կարող են լինել խելացի տեսախցիկներից մինչեւ առաջադեմ արդյունաբերական սարքեր: «Կասպերսկի»-ի վերլուծաբանները 2024-ի առաջին կիսամյակում միայն Ռուսաստանում գրանցել են վարակված IoT սարքերի թվի ավելի քան կրկնակի աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Վաճառվող եւ վարձույթով բոտնետներ: Նման գործիքները կարող են ունենալ անհատական կարգավորումներ եւ տարբերվել ըստ վարակի եղանակի, օգտագործվող վնասաբեր ԾԱ-ի տեսակի, ենթակառուցվածքի, հայտնաբերումը շրջանցելու մեթոդների: Դրանք մշակվում են ստվերային շուկայում վաճառքի համար, իսկ արժեքը կախված է որակից:

2024-ի հայտարարություններում, որոնք վերլուծել են փորձագետները, ամենացածր գինը կազմել է 99 ԱՄՆ դոլար, իսկ ամենաբարձրը՝ 10 հազար: Բոտնետները կարելի է նաեւ վարձակալել. նման ծառայության արժեքը տատանվում է ամսական 30-ից 4,800 ԱՄՆ դոլարի սահմաններում:

Բախտի բերման ապավինած գրոներ: Բոտնետները, որոնց սկզբնական կոդը հայտնի է դարձել արտահոսքի արդյունքում, ավելի մատչելի են, բայց ավելի քիչ հավանական է, որ դրանք օգուտ տան գրոհողներին: Դրանց հասանելիություն կարելի է ստանալ անվճար կամ ցածր՝ 10-50 ԱՄՆ դոլար գնով, սակայն պաշտպանական լուծումներով նման բոտնետների հայտնաբերման հավանականությունը մեծ է:

Պատվերով: Չարագործներն ստվերային շուկայում առաջարկում են գրոյից ստեղծել բոտնետ. Այդպիսի ծառայությունների արժեքը սկսվում է 3 հազար ԱՄՆ դոլարից: Նման գործարքների մեծ մասը կնքվում է մասնավոր կարգով, անձնական հաղորդագրությունների միջոցով: Կատարողներին սովորաբար ընտրում են նրանց հեղինակության հիման վրա, որն արտացոլում է օգտատիրոջ վարկանիշը ստվերային ֆորումներում:

«Առեւտրային օգուտ հետապնդելով՝ չարագործները բոտնետների միջոցով կարող են կազմակերպել կրիպտոարժույթի ապօրինի մայնինգ կամ շորթող ծրագրերի կիրառմամբ գրոհներ: Բաց աղբյուրների տվյալների համաձայն՝ այժմ փրկագնի միջին գումարը կազմում է 2 միլիոն ԱՄՆ դոլար: Ու թեեւ բոտնետները համեմատաբար մատչելի գործիք են համեմատած գրոհներ կատարելու այլընտրանքային եղանակների հետ, բայց դա դրանց բնավ միակ տարրը չէ», - մեկնաբանում է Kaspersky Digital Footprint Intelligence-ի վերլուծաբան Ալիսա Կուլիշենկոն:

Ենթակառուցվածքը չարագործներից պաշտպանելու համար «Կասպերսկի»-ի փորձագետները խորհուրդ են տալիս.

. օգտագործել այնպիսի լուծումներ, ինչպիսին է Kaspersky Digital Footprint Intelligence-ը, որոնք կօգնեն ՏԱ մասնագետներին գնահատել ընկերության պաշտպանվածության աստիճանը եւ արագ հայտնաբերել գրոհների հնարավոր վեկտորները, իսկ անհրաժեշտության դեպքում շտկել անվտանգության միջոցները,

. վերջնական կետերի համար տեղադրել հուսալի պաշտպանական լուծում, ինչպիսին է Kaspersky Security- ն բիզնեսի համար՝ վարքի վրա հիմնված անոմալ ակտիվությունը հայտնաբերելու եւ վերահսկելու հնարավորությամբ, որպեսզի կազմակերպությունը պաշտպանվի նոր եւ արդեն լավ հայտնի սպառնալիքներից, բոտնետ ցանցին միացման չենթարկվելու համար օգտատերերին խորհուրդ է տրվում.

. փոխել լռելյայն գաղտնաբառերը ցանցին միացված բոլոր սարքերում,

. օգտագործել հուսալի պաշտպանական լուծումներ, ինչպիսին է Kaspersky Premium-ը, որոնք լրացուցիչ կպաշտպանեն սարքերը տարածված կիբեռսպառնալիքներից եւ կհուշեն օգտատիրոջը, եթե նրա ցանցին փորձում է միանալ անծանոթ սարք:

«ՖԱՍԹ» ԲԱՆԿ

ԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՎ ԱՄՓՈՓՈՒՄ

«Ֆասթ» բանկն ամփոփել է ընթացիկ տարվա առաջին կիսամյակը դրական հիմնական ֆինանսական ցուցանիշներով, որը հաստատում են բանկի զարգացման արագ եւ միեւնույն ժամանակ կայուն տեմպերը:

2024 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով՝ բանկի ակտիվները կազմել են 181 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 55%-ով (բացարձակ աճը՝ 64 մլրդ ՀՀ դրամ): Վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր ակտիվների 72.9%-ը (132 մլրդ ՀՀ դրամ)՝ աճելով 44%-ով: Սա պայմանավորված է վարկավորման բարձր տեմպերով եւ նոր պրոդուկտների ինտեգրումով: Ակտիվներին զուգահեռ 82%-ով աճել են նաեւ Բանկի պարտավորությունները՝ կազմելով 115 մլրդ ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ ավանդային պորտֆելի եւ պարտատոմսերի ծավալները կազմել են 71 մլրդ ՀՀ դրամ (աճ՝ 107%) եւ 12 մլրդ ՀՀ դրամ (աճ՝ 98%):

«Ֆասթ» բանկն ընթացիկ տարում 24%-ով ավելացրել է նաեւ կապիտալը՝ հասցնելով 67 մլրդ ՀՀ դրամի:

Ֆինանսական ցուցանիշների աճին զուգահեռ բանկում աճել են նաեւ ակտիվ հաճախորդների, աշխատակիցների եւ մասնաճյուղերի քանակը:

2024 թ. հունվար-հունիս ամիսների ցուցանիշներով «Ֆասթ» բանկն ընդգրկվել է ՀՀ ՊԵԿ-ի կողմից հրապարակված 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում: Նշված ժամանակահատվածում բանկը պետական բյուջե է փոխանցել 2,76 մլրդ ՀՀ դրամ եւ գտնվում է 56-րդ հորիզոնականում:

«Ֆասթ» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՉԵԼՍԻ ՔԼԻՆԹՈՆ

ՄԻԱՆՈՒՄ Է «ԱՎՐՈՐԱ»-Ի ԸՆՏՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

«Քլինթոն» հիմնադրամի փոխնախագահը միանում է մարդասիրության ոլորտի առաջատարներին: «Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակի Ընտրող հանձնաժողովին է միացել «Քլինթոն» հիմնադրամի փոխնախագահ, հանրային առողջության փորձագետ Չելսի Քլինթոնը: Դոկտոր Քլինթոնը հայտնի է մարդկանց կյանքը բարելավելու իր ջանքերով, ինչը ոգեշնչում է ապագա առաջնորդներին ամբողջ աշխարհում ու նպաստում կարեւոր հարցերի, այդ թվում՝ առողջապահական հավասարության վերաբերյալ իրազեկության բարձրացմանը եւ գործնական քայլեր ձեռնարկելուն:

«Ավրորա» մրցանակը (1 միլիոն ԱՄՆ դոլար) շնորհվում է այն անհատներին, որոնք վտանգում են սեփական կյանքը, որպեսզի փրկեն այն մարդկանց կյանքը, որոնք տառապում են հակամարտություններից կամ մարդկության դեմ իրագործվող հանցագործությունների հետեւանքով: «Ավրորա» մրցանակի դափնեկիրն ստանում է նվիրատվության շղթան շարունակելու բացառիկ հնարավորություն՝ այդ միջոցներն ուղղելով համայնքներում մարդասիրական աշխատանք իրականացնող անհատներին:

«Ուրախ ենք ողջունելու Չելսի Քլինթոնին «Ավրորա» համայնքում: Հաշվի առնելով սոցիալական փոփոխություններին նվիրված երկարամյա ջանքերը՝ նա կատարյալ համալրում է Ընտրող հանձնաժողովում, եւ ես անհամբեր սպասում եմ մեր համատեղ աշխատանքին՝ լույս սփռելու մարդասեր գործիչների վրա, որոնք վտանգում են սեփական կյանքն՝ օգնելու դժվարին իրավիճակում գտնվողներին»,- ասաց «Ավրորա» մրցանակի Ընտրող հանձնաժողովի նախագահ եւ Լոնդոնի կայսերական քոլեջի Գլոբալ առողջապահական նորարարությունների ինստիտուտի համաղեկավար Լորդ Արա Դարզին:

«Չելսին իր հետ բերում է թարմություն եւ մեծ փորձառություն, որն, անկասկած, կհարստացնի մեր քննարկումները եւ կպահպանի տեսակետների լայն շրջանակ ընտրական գործընթացում»:

Երկար տարիներ լինելով հանրային առողջության փորձագետ՝ դոկտոր Քլինթոնը նաեւ «Քլինթոն» առողջապահության հասանելիության նախաձեռնության (Clinton Health Access Initiative) փոխնախագահն է: Հիմնադրամում աշխատելուց բացի, Քլինթոնը դասավանդում է Կոլումբիայի համալսարանի Մեյլմենի անվան հանրային առողջության դպրոցում: Նա նաեւ մի քանի գրքերի հեղինակ է, այդ թվում՝ լավագույն տարածում գտած «She Persisted» (Նա հաստատակամ էր) շարքի: Նա պետքարտուղար Հիլարի Ռոդհեմ Քլինթոնի հետ համահեղինակել է «Գիրք համարձակ կանանց եւ տատիկի այգիների մասին» գործը, իսկ Դեւի Շրիդհարի հետ՝ «Գլոբալ առողջապահության կառավարում. ո՞վ է ղեկավարում աշխարհը եւ ինչո՞ւ» գիրքը:

«Մենք բոլորս մեր դերն ունենք համաշխարհային մեծագույն մարտահրավերներին դիմակայելու գործում»,- նշեց «Քլինթոն» հիմնադրամի փոխնախագահ Չելսի Քլինթոնը: «Ինձ համար պատիվ է միանալ 2024 թ. «Ավրորա» մրցանակի Ընտրող հանձնաժողովին եւ շարունակել մեր համագործակցությունը «Քլինթոն» համաշխարհային նախաձեռնության (CGI) միջոցով՝ աջակցելու մարդասիրության ոլորտի առաջնորդներին, որոնք մեծապես փոխում են աշխարհը»:

2024 թ. «Ավրորա» մրցանակի հավակնորդների՝ «Ավրորայի» հերոսների անունները հայտարարվել էին 2023 թ. սեպտեմբերի 18-ին՝ Նյու Յորք քաղաքում տեղի ունեցած «Քլինթոն» համաշխարհային նախաձեռնության (CGI) ամենամյա միջոցառման ընթացքում: Ութերորդ «Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակը շնորհվեց Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում գործող իրավապաշտպան, աշխարհում հայտնի գինեկոլոգ Դենիս Մուկվեգեին 2024 թ. մայիսի 9-ին: Բժիշկ Մուկվեգեն Կոնգոյի «Փանզի» հիվանդանոցի եւ հիմնադրամի նախագահն է, որը հիմնադրել է 1999 թվականին՝ մայրական առողջության եւ մայրական մահացության համակարգային խնդիրը լուծելու նպատակով: Շարունակվող հակամարտության եւ պատերազմից բխող առողջապահական կարիքների պայմաններում՝ հիվանդանոցը դարձել է հակամարտությունների ժամանակ սեռական բռնության ենթարկվածների բուժման առաջատար կենտրոններից մեկն աշխարհում:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ

ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՆ ՍՏԱՑԵԼ

Տեղի է ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարարության փորձագիտական հանձնաժողովի ընթացիկ տարվա երրորդ նիստը, որի ընթացքում քննարկվել են Երեւան քաղաքում եւ Կոտայքի մարզում գտնվող 9 պատմամշակութային օբյեկտերին նորահայտ հուշարձանի կարգավիճակ տալու հարցերը: Քննարկված բոլոր օբյեկտները հանձնաժողովի դրական եզրակացությամբ ստացել են նորահայտ հուշարձանի կարգավիճակ:

Երեւան քաղաքի տեղական նշանակության նորահայտ հուշարձաններն են Կենտրոն վարչական շրջանի Աբովյան փող. 36 (1950-ական թթ.), Աբովյան փող. 39-41 (1950-ական թթ.), Բաղրամյան պող. 1 (Մոսկովյան փող. 20) (1945 թ.) բնակելի շենքերը, Նորք-Մարաշ վարչական շրջանի Ս. Խանզադյան փող. 60 (19-րդ դ.), Ս. Խանզադյան փող. 94 (19-րդ դ. վերջ- 20-րդ դ. սկիզբ), Ս. Խանզադյան փող. 100 (19-րդ դ. վերջ-20-րդ դ. սկիզբ) հասցեների բնակելի տները:

Կոտայքի մարզի Արզական գյուղի Ամրոցը (Ք. ա. 2-1-ին) եւ Քարաշամբ գյուղի Ամրոցը (Ք. ա. 2-1-ին) ստացել են հանրապետական նշանակության հուշարձանների կարգավիճակ, իսկ Քարաշամբ գյուղի գերեզմանոցին տրվել է Կոտայքի մարզի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված Սբ. Գեւորգ եկեղեցու (պետ. ցուցիչ՝ 6.66.1.2)՝ տեղական նշանակության ենթահուշարձանի կարգավիճակ:

Հանրապետության տարբեր մարզերում գտնվող պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պահպանական գոտիների քննարկված նախագծերից են Երեւան քաղաքի Ավան վարչական շրջանում գտնվող «Ավանի հյուսիսային գերեզմանոց» 10-19-րդ դդ. եւ «Բնակատեղի» մ.թ.ա. 6-րդ դ.- մ.թ.ա. 2-րդ դ. (պետ. ցուցիչ՝1.2.2), Նորք- Մարաշ վարչական շրջանի Հին Նորք թաղամասը, 19-րդ դ. վերջ-20-րդ դ. սկիզբ, Արագածոտնի մարզի Թալին քաղաքի Եկեղեցական համալիր Թալինի Կաթողիկե, 4-20-րդ դդ., Եկեղեցի Սբ. Աստվածածին, 613-615 թթ. (պետ. ցուցիչ՝ 2.3.4, 2.3.5) հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը: Միաժամանակ, քննարկվել են նաեւ նորահայտ հուշարձանների կարգավիճակ ստացած Կոտայքի մարզի Քարաշամբ գյուղի Ամրոցի (Ք.ա. 2-1-ին հազ.) եւ Արզական գյուղի Ամրոցի (Ք. ա. 2-1-ին հազ.) պահպանական գոտիների նախագծերը:

Ներկայացված նախագծերը հանձնաժողովի կողմից համարվել են ընդունելի եւ, ըստ սահմանված կարգի, համայնքների ղեկավարների եւ տարածքային կառավարման պետական մարմինների հետ համաձայնեցվելուց հետո կհաստատվեն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի կողմից:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՓՅՈՒՆԻԿԸ» ՆՈՐ ՏՐԱՆՍՖԵՐ Է ԿԱՏԱՐԵԼ

Հայաստանի չեմպիոն Երեւանի «Փյունիկը» պայմանագիր է կնքել Հայիթիի ազգային հավաքականի կիսապաշտպան Բրայան Ալսիուսի հետ, հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը:

Ալսիուսին ծնվել է Ֆրանսիայում եւ կարիերայի առաջին քայլերը կատարել է «Բորդոյում», որտեղ հասել է մինչեւ երկրորդ թիմ: Ֆրանսիայում նա հանդես է եկել տարբեր թիմերի կազմերում, սակայն ամենահեղինակավորը «Փարիզն» է, որը այդ ժամանակ ներկայացնում էր Լիգա 2-ը: Ֆրանսիայի երկրորդ ուժեղագույն լիգայում 28-ամյա ֆուտբոլիստն անցկացրել է չորս հանդիպում, իսկ գավաթի խաղարկությունում մասնակցել է մեկ մրցավեճի:

Նա հանդես է եկել նաեւ ռումինական եւ կիպրական ակումբներում:

Բրայան Ալսիուսը Հայիթիի ազգային հավաքականում անցկացրել է 33 հանդիպում:

ՍԱԼԱՀԸ ՇՐՋԱՆՑԵԼ Է ՌՈՆԱԼԴՈՒԻՆ

FourFourTwo պորտալը կազմել է Անգլիայի Պրեմիեր լիգայի պատմության լավագույն եզրային խաղացողների վարկանիշային աղյուսակը:

Այն գլխավորում է եգիպտացի Մոհամեդ Սալահը («Լիվերպուլ», «Չելսի»): Երկրորդ տեղը զբաղեցրել է Կրիշտիանու Ռոնալդուն («Մանչեսթեր Յունայթեդ»), երրորդը՝ Սոն Հեն Մինը («Տոտենհեմ»):

Լավագույն տասնյակում են նաեւ Էդեն Ազարը («Չելսի»), Սադիո Մանեն («Սաութհեմփթոն», «Լիվերպուլ»), Գարեթ Բեյլը («Սաութհեմփթոն», «Տոտենհեմ»), Ռոբերտ Պիրեսը («Արսենալ», «Աստոն Վիլա»), Ռայան Գիգզը («Մանչեսթեր Յունայթեդ»), Ռիյադ Մահրեզը («Լեսթեր», «Մանչեսթեր Սիթի») եւ Դեյվիդ Բեքհեմը («Մանչեսթեր Յունայթեդ»):

● Օգոստոսի 24-ին՝ ժամը 18:00-ին, ՀանդArt մշակութային այգում (Բյուրական) կցուցադրվի «Ցանկապատ» տրագիկոմեդիան: Տոմսերի արժեքը՝ սկսած 5.000 դրամից:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Բանկն առանց ինձ տեղեկացնելու իմ հաշվից գումար է հանել: Ուզում եմ իմանալ՝ արդյոք բանկի նման աշխատելաոճը համապատասխանում է օրենսդրության պահանջներին:

Մարիա Հայրապետյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 922-րդ հոդվածի համաձայն՝ բանկը հաշվից դրամական միջոցներ դուրս է գրում հաճախորդի կարգադրության հիման վրա:

Առանց հաճախորդի կարգադրության՝ հաշվում եղած դրամական միջոցները թույլատրվում է դուրս գրել դատարանի վճռով, ինչպես նաեւ օրենքով սահմանված կամ բանկի եւ հաճախորդի միջեւ պայմանագրով նախատեսված դեպքերում:

Այսպիսով, հաճախորդն իրավունք ունի իր հաշվում առկա դրամական միջոցները տնօրինել իր հայեցողությամբ՝ բանկին հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու կարգադրություն տալով: Սակայն պայմանագրով նախատեսված դեպքերում բանկն իրավունք ունի հաճախորդի հաշվից անակցեպտ (անառարկելի) կարգով գումարներ գանձել՝ ուղղելով այն հաճախորդի՝ բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունների: Օրինակ՝ հաճախորդը վարկային պայմանագրի գծով ունի ժամկետանց պարտավորություն բանկի նկատմամբ, եւ վարկի մարում չիրականացնելու դեպքում բանկն իրավունք ունի բանկում հաճախորդի այլ դեբետային հաշվից անակցեպտ կարգով գումար գանձել՝ ուղղելով այն վարկի մարմանը:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բանկն իրավունք ունի նաեւ առանց հաճախորդի կարգադրության հաշվից գումար դուրս գրել դատարանի վճռով սահմանված դեպքերում:

ԱՎԱՆԴՆԵՐ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ որ ավանդները չեն երաշխավորվում:

Գեւորգ Փռանգյան (61 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գ. Նռանգյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ չեն երաշխավորվում այն ավանդները, որոնք՝

ա) պատկանում են բանկի ղեկավարին եւ (կամ) նրա ընտանիքի անդամներին,

բ) պատկանում են տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձին եւ (կամ) նրա ընտանիքի անդամներին,

գ) ճանաչվել են հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց,

դ) սեփականատերը հրաժարվել է իր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,

ե) ներդրվել են ներդրման պահին բանկի սահմանած տոկոսադրույքը առնվազն 1.5 անգամ գերազանցող տոկոսադրույքով:

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ հատուցումն իրականացվում է միայն հայկական դրամով: Արտարժութային ավանդների դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձեւավորված միջին փոխարժեքով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

«Սեւան երիտասարդական ակումբ» հասարակական կազմակերպությունը օգոստոսի 20-ին իրականացրել է «Ափդեյթ» ծրագիրը, որն ուղղված էր Սեւանա լճի ավազանի առափնյա համայնքների ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանը, կենսունակության եւ փոխանցման ապահովմանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+8 + 13	+19 + 23
Կոտայքի լեռներ	+8 + 12	+18 + 21
Կոտայքի նախալեռներ	+16 + 18	+25 + 27
Գեղարքունիք	+ 8 + 12	+17 + 20
Լոռի	+11 + 14	+18 + 21
Տավուշ	+14 + 18	+20 + 23
Արագածոտնի լեռներ	+ 8 + 11	+17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18	+25 + 28
Արարատ	+18 + 20	+28 + 30
Արմավիր	+17 + 19	+28 + 30
Վայոց ձորի լեռներ	+10 + 12	+18 + 21
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 20	+28 + 30
Սյունիքի հովիտներ	+17 + 21	+23 + 26
Սյունիքի նախալեռներ	+11 + 14	+18 + 21
ԼՂՀ	+12 + 16	+18 + 20
Երեւան	+18 + 20	+30 + 32

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.8.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*